

երգերը աստիճանէ աստիճան շիտակ կ'ելեն կ'իջնան, իսկ մեր երգերուն աստիճանները մանրամասունք ունին, այսինքն աստիճանէ աստիճան խաղերով կ'ընեն ելեկջը։ Անոր համար Տիրացու Համբարձումը ետևէ էր աս թերութեան ճարը ընելու. Նոր խաղեր ալ հնարեց, բայց մահը վրայ հասաւ, կիսկատար մնացին։ Այսու ամենայնիւ մեր Բժշկեան տրապիզոնցի Հ. Մինաս վարդապետը՝ որ ժամանակակիցն էր, անոր օդնականութեամբ մեր երաժշտութեանը վրայ տեղեկութիւն մը դրածէ. որ և ատենօք կրնայ հրատարակուիլ։ Տիրացու Համբարձումին աշկերտն ալ Զէօմլէկճեան Տիրացու Պետրոսը, որ աւանդապահ եղաւ վարժապետին եղանակներուն, իր վարպետութեամբը ետևէ եղաւ անոր սկսած արուեստը կատարելագործելու, բայց իր կեանքն ալ չիբաւեց։ Անկէ ետև ալ Տիրացու Գարրիէլը ելաւ, որ նոյն խաղերը կատարելագործել ջանալուն համար՝ նօրաձի ըսուեցաւ, բայց ինքն ալ փափաքին շիհասած՝ վտխճանեցաւ։ Ասոնց գրուածքները որուն քովը մնալն ալ չեմք գիտեր. երանի թէ շիկորսուէին, և ուրիշ ազգային վարպետ երաժշտի մը օգտակար ըլլային։

Աս կարծ տեղեկութիւնը տուինք, որպէս զի հիմակուան ազգասէր երգապետներուն յորդոր մը ըլլայ, որ մեր սրբոց Հարց Սահակայ ու Մովսեսի և այլոց սրբոց քերթողաց շինած շարականներուն հոգեշունչ եղանակները կենդանացընեն, ու անոնց անմոռաց և անփոփխ մնալուն կերպը զտնան. որպէս զի պահուի ազգային հնութիւնն, որ իրեն յատուկ բնականութիւն մըն ալ ունի, ինչպէս եւրոպացի վարպետ երաժիշտներն ալ կը վկայեն։

Գեր. Եդուարդ Վ. Հետրուիջեան

## ԱՐԱՀԱՆՔ ԿՈՂԲԱՑ Ի ՄԵՇ ՀԱՅԱ

Գերմանիոյ աշխարհագրական օրագրաց մէկն՝ Աւսլանտ<sup>1</sup> (որ թարգմանի Դրսի-Երկիր կամ Օտար-աշխարհ), նուրերս հրատարակեց հետևեալ տեղեկութիւնը՝ մեր աշխարհին նշանաւոր բնական մէկ երևութիւն և հարստութեան վրայօք. որոյ վրայ մենք ալ քանի մը ծանօթութիւն կ'աւելցընենք։

« Կողբայ աղահանքն՝ Երասխայ հարաւակողմն են, քիչ հեռի անոր եզերքներէն, իուսական Հայաստանի մէջ, և մօտ Օսմանեանց բաժնին։ Ով որ զանոնք տեսած չէ՝ անկարելի է որ անոնց առատութեան վրայ գաղափար մ'ունենայ. Քրիստոսի թուականէն շատ առաջ սկսուած ըլլալով հանուիլ, թերևս դեռ հաղար տարի ալ առատապէս աղ պիտի տան, և դեռ պիտի չի սպառին։ . . . .

Գիտեմք ՚ի պատմութենէ որ կողբայ աղահանքն նշանաւոր էին նաև յամի 950, երբ զարմանազան գեղեցիկ մը, Հայ իշխանուհին Խորիշահ խաթուն<sup>2</sup> կը

1. Բուն այս օրագիրը չունենալով վրանկ օրագրէ մը թարգմանած եմք. կ'երեկ թէ նա ալ բնագրէն համառօտած է, որոյ նշաններ են տեղաեղ դրած կէտերը (....): Բնագիրն ալ նեչ աղբիւրէ առած է՝ յայտ չէ, այլ թուի ՚ի Տիւպուայ Մոնթէրիեօ Զուկիցերցոյ, որ ասկէ իրը 40 տարի մ'առաջ պարտերէ ՚ի Ռուսական Հայսե ՚ի Կովկաս, և շատ դիանական և ընդարձակ գիրք մը դրած է, բազմաթիւ ընտիր պատկերօք. ուսկից մենք ալ առած Կողբայ աղահանից երեսյթը՝ ընծայած եմք ՚ի թիւ 367 Նշմարաց Հայաստանի, հանգերձ աեղեկութեամբ, զոր չուզեցինք հօս կըկնել. փափագոզն կըրնայ փնտուել զայն։

2. Այս գեղեցիկ գշայոյն մեզ անծանօթ է. կարծէինք որ ՚ի կէս Ժ դարու Կողբ իր դաւառաւն՝ որ է Ճակատք, Բագրատունի Հայ թագաւորաց կալուած էր. այն ատենուան թագաւորն էր Աշոտ Գ Ողորմածն, և իր թագուհի կինն կոչուի Խոսրովանոյշ։ Խոկ Խորիշահ անուամբ երկու տիկնայք ծանօթ են մեզ, այլ Ժ Գ դարուն մէջ. մէկն կին Վաղթանկայ իշխանի Ներքին Խաչենոյ ՚ի սկիզբն գարուն, միւսն ՚ի կէս դարուն՝ դուստր Մարզպանայ Մամիկոնէի և կին մեծանուն Քուրդ իշխանի Հայոց, որոյ սեփական կալուած էր Վարդենիս գեղն ՚ի ստորոտն Արագածայ, Երասխայ միւս կողմը (Ճախ), ոչ շատ հեռի ՚ի Կողբայ. հա-

թագաւորէր այդ քաղըին մէջ<sup>1</sup> ... բայց աւանդութիւնն շատ աւելի վեր կ'ելնէ. տեղւոյն գեղացիք կը պատմեն, թէ նոյնահապետ առաջինն եղած է կողը, աղը համտեսելու. և ինչուան անոր ձեռքով կտրած աղին տեղն ալ կը ցուցընեն : ... կովկասու եկեղեցիներէն մէկն ալ չէ պահած այն գործիքները՝ զոր գործածեր էր այս ժամանակի հնութեան մէջ կորած մարդն<sup>2</sup>. բայց իր գերեզմանն կը տեսնուի 'ի Նախիջեւան. և ուրիշ կողմեր զանազան կրօնական շէնքերու մէջ կը ընած նշմարուիլ իր տապանին կոտորակք, զգեստուց պատառքն, ջրոյ ըմպանակըն, և այլն<sup>3</sup> : ...

կողք՝ հին Հայաստանի հնագոյն քաղաքաց մէկն՝ հիմայ մեծկակ գեղ մ'է 200 տամբք, բայց գեռ կը պահէ խիստ հետաքննական շէնքեր, և 'ի մասնաւորի երեք եկեղեցի շատ խանդարեալ. որոց բազմաթիւ արձանագրութիւնքն, որոց շատերն թ դարուն կիսուն են, կ'իմացընեն մեզի որ ատենգք իշխանազունք թագաւորեր են 'ի կողք :

կողբայ աղահանքն խաւ 'ի խաւ տարածուած են ամենսին անբոյս լերկ լերան մը մէջ, որ հարաւային և արևմտեան կողմերէն ուղղաբերձ կը վերանայ : Ատորին խաւն (կամ կարգն) որ ամենէն հարուստն է 22-25 ոտքբարձրէ, և ծածկեալ է կաւուտ և կապոյտ ու կարմիր մառնայով, որոյ վրայ կայ երկրորդ կարգ մը աղի, զոր կը ծածկեն ուրիշ կաւեր, և անոր վրայ ալ նոյնպէս երրորդ կարգ մը : Հեռուէն լեռն կը ներկայացընէ շատ մը երկայնածիգ զուգահեռական երիզներ, տեղ տեղ

անօրէն ասոր տիկին Խորիշահն է մեր Գերմանացի օրագրին յիշածն և 300 տարի առաջ տարած :

1. Կողք ոչ երբեք իբրև քաղաք յիշուի, այլ յայտ է որ թէ և գիւղ անուանի՝ մեծկակ աւան մ' էր :

2. Որչափ ալ հին է նոյ՝ վախ չկայ կորսուելու ժամանակաց մէջ :

3. Տապանին կոտորակաց վրայ յիրաւի շատ աւանդութիւնք կան, նաև մեր ազգին մէջ. նոյնպէս նոյի անուանեալ գերեզմանին՝ 'ի Նախիջեւան. բայց անոր զգեստուց և ջրի ամանին և նմանաց վրայ՝ չեխնք լսած :

ճերմակ, տեղ տեղ կարմիր, տեղ տեղ ալ մթագոյն կանաչ :

Անսպառ կ'երեսին աղահանքն . շատ դիւրաւ և աժան գնով կը հանեն աղը, 100 և ինչուան 150 լիպրա ծանրութեամբ կուռ կտորներ չորս կողմէն պատելով և վար ձգելով : Աղ կտրողն 2560 լիպրայի համար 10 ֆրանգի չափ վարձ կ'առնու : Իսկ աղը գործածողը անթիւեն . ամեն ատեն լերան ստորոտը կ'երեւին երկայնաշար կարավանք եղանց և ուղարկուց, որ երկրին ամեն կողմէն կուգան այս պատուական հանքը բառնալու : Այս կարգէ դուրս հրաշալի հարըստութենէն, գործաւորաց թեթև վարձքէն, և շատ կողմտարուելէն՝ կ'իմացուի որ աղահանութիւնն անարուեստ կերպով կ'ըլլայ, ապագայն չի մտածուիր և շատ աղ կը կորսուի :

Ատենօք կողբայ աղահանքն հասարակաց ստացուածք էր . ով որ աղ ուղէր՝ իր ուղտը, ձին կամ գոմէշն առած կուգար 'ի լեռը . հիմայ Ռուսաց կառավարութիւնն փոխած է այս բանս . իրեն սեփականած է աղահանքին ստացուածը, և վարձած է 20000 ռուպլեաց :

կողբայ մօտ են աւերակը հին Արմավիր բերդի, որոյ համար կ'ըսեն Հայք, թէ Քրիստոսէ 2000 տարի առաջ շինուած է, և 1800 տարի Հայոց թագաւորանիստն եղած է : <sup>4</sup>

1. Արմաւրայ աւերակքն ալ Երասխայ հիւսիսային կողմն են, մինչ կողք կայ 'ի հարաւոյն, և իրբև կէս օրուան ճամբայ մը իրարմէ հեռու են :